ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ·

1· Նոյեմբ· Լսեցին զեկուցում· Շամախու վիճակի Ղալագեայ գիւղի հրկիզման գոյժը հասնելով նորին Վեհափառութեան՝ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ականջը՝ կարեվէր խոցեց նորին Աստուածընտիր Օծութեան հայրագորով սիրտը, որ և հաճեցաւ հրամայել՝ Մայր Աթոռիս սուղ միջոցների ներածի չափով փութով օգնութեան հասնել տառապեալ 180 հրկիզեալ գերդաստանների և յորդոր կարդալ բարեպաշտ ժողովրդեան կամաւոր նուէրներով սփոփել նրանց վիշտը· ՀՐԱՄԱՅԵՑԻՆ պատուիրել Գանձապահ բ· Վահան վարդապետին ծախս գրել 500 բուբլի, որն և ուղարկել հրկիզեալների խնամատար հոգաբարձութեանը։ Ծանուցանելով այս «Արարատում» ի գիտութիւն բարեպաշտ հայերի, հրաւիրել նրանց՝ օգնութեան ձեռք կարկաւել իրենց տառապեալ եղբայրներին կամաւոր նուէրներով, որն և կարող են ուղարկել Սինոդիս ի տնօրինութիւն։